«ՀՀ Լոռու մարզի Սվերդլովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-Ը հայտարարում է մրցույթ՝ երաժշտության (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը, և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

. Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

.Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

.Անձը հաստատող փաստաթուղթ,

.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

.Ինքնակենսագրություն (Ձև 5),

.Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

.ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

.Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

.Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 14-28-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից 15-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթները տեղի կունենան հոկտեմբերի 1-ին ՝ ժամը 12 :00-ին, Սվերդլովի միջնակարգ դպրոցում:

Հասցեն՝ գ. Սվերդլով, 1-ին փողոց, 7-րդ փակուղի, շենք 1:

Տեղեկությունների համար զանգահարել (094) 21-28-87 հեռախոսահամարով:

Դպրոցի տնօրեն՝ Սյուզաննա Դոլմազյան